**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ**
**ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունվարի 2026 թվականի N 0001-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025թվականի հոկտեմբերի 30-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 27-Ն հրամանով հաստատված հավելվածի 15-րդ կետով. ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1. 2026թ. փետրվարի 10-ին անցկացնել մրցույթ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի /պաշտոնի անձնագրի ծածկագիր 2.3-4/, ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի /պաշտոնի անձնագրի ծածկագիր 2.3-5/ և աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի /պաշտոնի անձնագրի ծածկագիր 2.3-6/ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար:
2. Մրցույթի անցկացման մասին երկօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել մարզպետի աշխատակազմին:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմին՝ ապահովել մրցույթի անցկացման հայտարարության հրապարակումը օրենքով սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

07 հունվարի 2026 թ.
ք. Արարատ